Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
փետրվարի 17 -ի N 108 - Ա
որոշման

# Ց Ա Ն Կ

## «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՀՕ-200-Ն ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկա-յացնելու համար պատասխանատու պետական կառա-վարման մարմնի անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը | Իրավական ակտն ընդունելու առնչու-թյամբ իրականաց-վող միջոցառում-ների ֆինանսա-կան ապահովման աղբյուրը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | «Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդություն-ների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1506-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարու-թյուն ներկայացնելը | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2015 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2. | «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարու-թյուն ներկայացնելը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2015 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3. | «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահման-ված ֆինանսավորման բարձ-րացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստի-ճանի սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարու-թյուն ներկայացնելը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի | 2015 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | նախարարություն | | |
| 4. | «Մանկավարժահոգեբանա-կան աջակցության ծառայու-թյունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայացնելը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 2016 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5. | «Տարածքային ու հանրապե-տական մանկավարժահո-գեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարու-թյուն ներկայացնելը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 2016 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 6. | «Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփո-խություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայացնելը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2016 թ. մարտի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 7. | «Տարածքային և հանրապե-տական մանկավարժահոգե-բանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարու-թյուն ներկայացնելը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2016 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15_0108